Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-237-18.03.2008-ԳԿ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ) ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 4-ի, ՀՕ–186-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն օրենքը կարգավորում է փաստաթղթի պարտադիր օրինակ (այսուհետ՝ պարտադիր օրինակ) հանդիսացող նյութերի հատկացման, պահպանության, հաշվառման և օգտագործման հետ կապված հարաբերությունները»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասից հանել «բնագավառը կարգավորող» բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 3. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ա) ***փաստաթուղթ***՝ ելից տեղեկություն պարունակող, պահպանության և հանրային օգտագործման համար ժամանակի և տարածության մեջ փոխանցման ենթակա տեղեկույթ պարունակող տեքստային, պատկերային, տեսաշարային և (կամ) ձայնաշարային նյութական կրիչին կամ տարբեր նյութական կրիչներին

միաժամանակ ամրացված (համակցված), ինչը ամբողջական է իր բաղկացուցիչ մասերով.

բ) ***փաստաթղթի ելից տեղեկություն***՝ տվյալների ամբողջական համալիր, որը բնութագրում է փաստաթուղթը և կարող է հիմք հանդիսանալ օգտագործողի տեղեկացման, վիճակագրական և (կամ) մատենագիտական հաշվառման համար.

գ) ***պարտադիր օրինակ***՝ փաստաթուղթ, որը պատրաստողը, սույն օրենքով սահմանված կարգով ու քանակով, անհատույց հատկացնում և առաքում է ստացողներին.

դ) ***փաստաթուղթ պատրաստող***՝անկախ սեփականության կամ կազմակերպական-իրավական ձևից իրավաբանական անձ, ինչպես նաև ֆիզիկական անձ, որն իրականացնում է փաստաթղթի պատրաստումը.

ե) ***պարտադիր օրինակ ստացող***՝ սույն օրենքով սահմանված կարգով ու քանակով պարտադիր օրինակը ստացող և պահպանող իրավաբանական անձ.

զ) ***անորակ պարտադիր օրինակ***՝ պարտադիր օրինակ, որի տպագրական սխալը, մեխանիկական և (կամ) էլեկտրոնային տվյալների վնասվածքներն ու այլ պատճառներն անհնար են դարձնում ամրագրված տեղեկության ընկալումը:»:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 4. ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է՝

ա) փաստաթուղթ պատրաստողի և պարտադիր օրինակ ստացողի վրա.

բ) Հայաստանի Հանրապետությունում պատրաստված փաստաթղթերի, Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, ինչպես նաև ֆիզիկական անձանց պատվերով օտարերկրյա պետություններում պատրաստված և Հայաստանի Հանրապետությունում իրացվող փաստաթղթերի վրա:

2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում՝

ա) անձնական և ընտանեկան գաղտնիք պարունակող փաստաթղթերի.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական, ծառայողական, վիճակագրական, առևտրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք, ինչպես նաև ծառայողական տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի.

գ) մեկ օրինակից ստեղծված փաստաթղթերի.

դ) արխիվային փաստաթղթերի (նյութերի), բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

ե) բացառապես ցանցային համակարգի միջոցով տարածվող էլեկտրոնային փաստաթղթերի.

զ) գործավարական և տեխնիկական փաստաթղթերի (ձևաթղթեր, հաշվետվությունների և հաշվառումների գրանցամատյաններ, ուղեցույցներ, շահագործման հրահանգներ և այլն).

է) ռազմական բնույթի տեխնիկական փաստաթղթերի, ձևաթղթերի և հաշվապահական հաշվառման համար նախատեսված փաստաթղթերի վրա:

3. Հայաստանի Հանրապետության արխիվային հավաքածուին պատկանող փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և հանրային օգտագործման գործառույթները կարգավորվում են «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 4-րդ հոդվածից հետո լրացնել նոր 4.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 4.1. ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

1. Սույն օրենքի նպատակն է՝

ազգային մշակութային ժառանգության անքակտելի մաս կազմող փաստաթղթերի անձեռնմխելի հավաքածուի ստեղծումը, մշտական պահպանությունը և դրա մասին տեղեկատվության ապահովումը:

2. Սույն օրենքի խնդիրն է՝

պարտադիր օրինակի հատկացման, պահպանության, հաշվառման և օգտագործման իրավական կարգավորումը:»:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 5-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 7. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. ա) և զ) ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) ***Հրատարակություն*** (պարբերական և ոչ պարբերական)՝ խմբագրված, ինքնուրույն ձևավորմամբ (տեքստային, նոտագրական, քարտեզագրական, պատկերահրատարակային), այդ թվում՝ կույրերի ու թույլ տեսնողների համար նախատեսված Բրայլի կամ այլ համակարգով ստեղծված փաստաթուղթ.

զ) ***չհրապարակված փաստաթուղթ՝*** գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, ատենախոսություններ, ավանդադրված գիտական աշխատանքներ, ալգորիթմներ և ծրագրեր:»:

2. բ), է) ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 8. Օրենքը 6-րդ հոդվածից հետո լրացնել նոր 1.1.-ին գլուխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 1.1.

ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀՈԴՎԱԾ 6.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է պարտադիր օրինակի պահպանությունը.

բ) ապահովում է պարտադիր օրինակի մասին տեղեկության հանրային հասանելիությունը.

գ) սահմանում է պարտադիր օրինակի հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը՝ ըստ փաստաթղթի տեսակների.

դ) սահմանում է փաստաթղթի՝ ելից տեղեկություններ համարվող տվյալները և դրանց տրման կարգը.

ե) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

ՀՈԴՎԱԾ 6.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Լիազորված պետական մարմինը՝

ա) մշակում է պարտադիր օրինակի՝ ըստ փաստաթղթի տեսակների պահպանության, հաշվառման, օգտագործման կարգը և ապահովում դրանց կիրարկումը.

բ) սահմանում է պարտադիր օրինակի մատենագիտության կազմման կարգը.

գ) իրականացնում է պարտադիր օրինակի վերաբերյալ տեղեկույթի հանրային հասանելիությունը.

դ) ապահովում է հրապարակման, հրատարակման կամ թողարկման ելից տեղեկության գրանցումը՝ ըստ տեսակների.

ե) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:»:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»:

ՀՈԴՎԱԾ 10. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 7. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

1. Փաստաթուղթ պատրաստողը պարտավոր է ստացողներին անհատույց հատկացնել պարտադիր օրինակը: Պարտադիր օրինակի հատկացման և առաքման ծախսերը ներառվում են փաստաթղթերի պատրաստման ինքնարժեքում:»:

ՀՈԴՎԱԾ 11. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 8. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՍՏԱՑՈՂՆԵՐԸ

1. Պարտադիր օրինակներ ստացողներ են՝

ա) «Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային գրադարան).

բ) «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային գրապալատ).

գ) «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Հայաստանի ազգային արխիվ).

դ) «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ազգային կենտրոն):»:

ՀՈԴՎԱԾ 12. Օրենքը 8-րդ հոդվածից հետո լրացնել նոր 8.1-ին և 8.2-րդ հոդվածներով հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 8.1. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետությունում տպագրված լրատվական միջոցների պարտադիր օրինակների հատկացումը իրականացվում է «Ձանգվածային լրատվության միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Փաստաթուղթ պատրաստողը (անկախ թողարկման քանակից)՝ սկսած առաջին խմբաքանակի պատրաստման պահից, իսկ օտարերկրյա պետություններում պատրաստված փաստաթուղթը՝ սկսած Հայաստանի Հանրապետության տարածքում իրացման պահից, 10-օրյա ժամկետում հատկացնում և առաքում է՝

ա) Հայաստանի ազգային գրադարանին՝

- երկու պարտադիր օրինակ հրատարակությունից.

- մեկ պարտադիր օրինակ պաշտոնական փաստաթղթից.

- մեկ պարտադիր օրինակ չհրապարակված փաստաթղթից (ատենախոսություն).

- մեկ պարտադիր օրինակ տեսալսողական արտադրանքից.

- մեկ պարտադիր օրինակ էլեկտրոնային հրատարակությունից:

բ) Հայաստանի ազգային գրապալատին՝

- մեկ պարտադիր օրինակ հրատարակությունից.

- մեկ պարտադիր օրինակ պաշտոնական փաստաթղթից:

գ) Հայաստանի ազգային արխիվին՝

- մեկ պարտադիր օրինակ տեսալսողական արտադրանքից.

- մեկ պարտադիր օրինակ պաշտոնական փաստաթղթից:

դ) Ազգային կենտրոնին՝

- մեկ պարտադիր օրինակ տեսալսողական արտադրանքից.

- երկու պարտադիր օրինակ էլեկտրոնային հրատարակությունից.

- մեկ պարտադիր օրինակ չհրապարակված փաստաթղթից:

ՀՈԴՎԱԾ 8.2. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

1. Պարտադիր օրինակը ենթակա է անժամկետ պահպանության, պետական հաշ-վառման և օգտագործման: Պարտադիր օրինակի հաշվառման, պահպանության և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Պարտադիր օրինակի հավաքածուները չեն կարող օգտագործվել որպես պարտավորությունների կատարման ապահովման միջոց, ենթակա չեն փոխանակման և օտարման:

3. Պարտադիր օրինակի մատենագիտության կազմման կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

4. Պարտադիր օրինակի օգտագործումը իրականացվում է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

ՀՈԴՎԱԾ 13. Օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

ՀՈԴՎԱԾ 14. Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՂԻ ԵՎ ՍՏԱՑՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»:

ՀՈԴՎԱԾ 15. Օրենքի 3-դ գլուխը լրացնել նոր 14.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 14.1. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿ ՊԱՏՐԱՍՏՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Պարտադիր օրինակ պատրաստողը պարտավոր է՝

ա) փոխարինել անորակ պարտադիր օրինակը՝ դրա մասին ստացողի դիմումը ստանալու օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում.

բ) փաստաթղթի քանակի մի մասը առավել որակյալ տարբերակով (թղթի, ձայնագրության և (կամ) տեսագրության որակի, կազմի, ձևավորման և այլ հայտանիշների առումներով) պատրաստելու դեպքում պարտադիր օրինակը հանձնել այդ մասից.

գ) պարտադիր օրինակ հանդիսացող համակցված փաստաթուղթը հանձնել ամբողջական:

2. Պարտադիր օրինակ պատրաստողն իրավունք ունի՝

ա) անվճար ստանալ փաստաթղթի ելից տեղեկությունը.

բ) անվճար վիճակագրական տեղեկույթ ստանալ իր հանձնած պարտադիր օրինակի, ինչպես նաև մատենագիտական տեղեկատվություն՝ պետական (ազգային) մատենագիտական հրատարակություններում և գրացուցակներում, ազդօրինակային, ռեֆերատային և գովազդային հրատարակություններում հրապարակման մասին:»:

ՀՈԴՎԱԾ 16. Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 15. ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿ ՍՏԱՑՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1. Պարտադիր օրինակ ստացողը պարտավոր է՝

ա) իրականացնել պարտադիր օրինակի պահպանությունը, հաշվառումը և օգտագործումը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

բ) ապահովել պարտադիր օրինակի մասին տեղեկույթի մատչելիությունը.

գ) օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել պարտադիր օրինակ պատրաստողի հեղինակային իրավունքները:

2. Պարտադիր օրինակ ստացողը իրավունք ունի՝

ա) անորակ պարտադիր օրինակը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, դիմել պատրաստողին՝ այն նորով փոխարինելու համար.

բ) պատրաստողից ստանալ պարտադիր օրինակի առավել որակյալ տարբերակով թողարկված փաստաթուղթը.

գ) համակցված փաստաթղթի ոչ ամբողջական պարտադիր օրինակը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, դիմել պատրաստողին՝ ամբողջական համակցված փաստաթուղթը ստանալու համար»:

ՀՈԴՎԱԾ 17. Օրենքի 4-րդ գլուխը լրացնել նոր 17.1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 17.1. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

1. Սույն օրենքի 8.2-րդ հոդվածի գործողությունը տարածվում է ԽՍՀՄ և ՀԽՍՀ կառավարությունների որոշումներով, որպես պարտադիր օրինակ հանձնված նյութերի վրա:»:

ՀՈԴՎԱԾ 18. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ) ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության /փոփոխության, լրացման/ հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկության վերաբերյալ հեղինակի /հիմնական զեկուցողի/ եզրակացությունը
ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդությունների և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, պատգամավոր Արտակ Դավթյան	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ	«Սույն օրենքը կարգավորում է ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող փաստաթղթերի (վկայագրերի) (այսուհետ՝ փաստաթղթեր) ՝ բոլոր տեսակի հրատարակությունների, էլեկտրոնային հրապարակումների և չհրատարակված նյութերի առաքման, մշտական պահպանության, մատենագիտական մշակման, վիճակագրական հաշվառման և դրանց մասին տեղեկատվության հանրային սպասարկման առընչությամբ ծագող իրավական և ֆինանսատնտեսական հարաբերությունները :»	Չի ընդունվել, քանի որ օրենքի կարգավորման առարկայում անհրաժեշտությունը չկա բոլորը ներառելու, հաշվի առնելով, որ օրենքի առանձին հոդվածներով սահմանված են պարտադիր օրինակի տեսակները և այլն:
	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ	«***Փաստաթուղթ***՝ պահպանության և հանրային օգտագործման համար ժամանակի և տարածության մեջ փոխանցման ենթակա տեղեկություն պարունակող տեքստային, պատկերային, տեսաշարային և կամ ձայնաշարային և այլ նյութական կրիչ»: «***օրինակ՝*** պատրաստված փաստաթղթի նմուշ,	Ընդունվել է մասնակի, «***Փաստաթուղթ***» հասկացությունը խմբագրվել է:

		որը նույնական է բնօրինակին»	
		փաստաթղթի պարտադիր ավանդադրվող օրինակ **(այսուհետ՝** ***պարտադիր օրինակ*****)՝** հրապարակված, թողարկված, պատրաստված (այսուհետ՝ *պատրաստված*) տարբեր տեսակի փաստաթղթերի ավանդադրվող օրինակ, որը պատրաստողը սույն օրենքով սահմանված կարգով ու քանակով անհատույց հատկացնում է փաստաթղթեր ստացողներին.	Չի ընդունվել, նշված հասկացությունը օրենքում չի օգտագործվում:
		փաստաթղթեր պատրաստող՝ անկախ սեփականության և կազմակերպական-իրավական ձևից՝ իրավաբանական անձ, ինչպես նաև ֆիզիկական անձ, որը պատրաստում, հրատարակում և հատկացնում է պարտադիր օրինակ (հրատարակիչ, զանգվածային լրատվության միջոցի խմբագրություն, տեսաձայնաշարային արտադրանք պատրաստողը, հեռուստառադիոհաղորդումների թողարկող (արտադրող, հեռարձակող) կազմակերպությունները, գիտահետազոտական, փորձարարա-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները և այլ մարմինները, ինչպես նաև սեփական ստեղծագործությունները հրատարակող ֆիզիկական անձինք, որոնք իրականացնում են փաստաթղթի պարտադիր օրինակի պատրաստումը, հրատարակումը, բազմացումը և հատկացումը (փոխանցումը, առաքումը, այսուհետ՝ հատկացում).	Չի ընդունվել, որովհետև ներկայացված տար-բերակում թվարկվում են իրավաբանական անձանց գործառույթ-ները, ինչը ծանրաբեռ-նում է հասկացությունը և ստեղծում է խառնաշփոթ:

		փաստաթղթեր ստացող՝ անհատույց պարտադիր օրինակը ստանալու, հաշվառելու, պահպանելու և դրանց մասին տեղեկատվության հանրային սպասարկումը կազմակերպելու իրավասությամբ օժտված իրավաբանական անձ.	Չի ընդունվել, նախագծում հատուկ հոդվածով սահմանվում են փաստաթուղթ (պարտադիր օրինակ) ստացողներին:
		Հայաստանի Հանրապետության ազգային գրադարանային-տեղեկատվական հավաքածու ՝ փաստաթղթի պարտադիր օրինակների բոլոր տեսակների, ինչպես նաև այդ փաստաթղթերի վերաբերյալ կազմված մատենագիտական տվյալների հավաքածու, որը նախատեսված է մշտական պահպանության, համալրման և հանրային օգտագործման համար	Չի ընդունվել, քանի որ այն կարգավորվում է <<Գրադարանների և գրադարանային գործի մասին>> ՀՀ օրենքով:
	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին և երկրորդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	«1. Սույն օրենքը տարածվում է պարտադիր օրինակ պատրաստող, ստացող, հաշվառող և պահպանող կազմակերպությունների վրա :» 2. Պարտադիր օրինակի հատկացման վերաբերյալ սույն օրենքի պահանջը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում պատրաստված փաստաթղթերի վրա, ինչպես նաև օտարերկրյա պետություններում պատրաստված ցանկացած փաստաթղթերի վրա, որը պատրաստվել է փաստաթղթի իրավատերը հանդիսացող Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական և ֆիզիկական անձանց պատվերով և	Չի ընդունվել, քանի որ ստացող, հաշվառող և պահպանող կազմակերպությունները նույն իրավաբանական անձինք են: Ընդունվել է մասնակի: Նախագծում ավելացվել է «ֆիզիկական» բառը:

		Հայաստանի Հանրապետությունում իրացնելու նպատակով:	
	Ուժը կորցրած ճանաչել օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի ը) կետը և 2-րդ մասը, իսկ մասի դ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	«դ) դրանց օգտագործումը հանրությանը տեղեկատու-մատենագիտական սպասարկման կազմակերպման համար.	Չի ընդունվել, որովհետև օրենքի 5-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչվել, իսկ պարտադիր օրինակի հաշվառման և պահպանման կարգը սահմանում է ՀՀ կառա-վարությունը:
	Նախագծի 7-րդ հոդված. օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա) և ե) կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	1. Պարտադիր օրինակ համարվող փաստաթղթերի տեսակներն են՝ ա) ելից տեղեկություններ ունեցող, խմբագրա-հրատարակչական մշակման ենթարկված և պոլիգրաֆիական ինքնուրույն ձևավորմամբ պարբերական և ոչ պարբերական հրատա-րակությունները (տեքստային, նոտագրական, քարտեզագրական, պատկերահրատարա-կային)	Չի ընդունվել, նոր խմբագրությամբ է շարադրվում օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի <<ա>> կետերը և ոչ թե 1-ին մասն ամբողջությամբ:
		ե) էլեկտրոնային հրատարակումներ՝ հաշվո-ղական տեխնիկայի ծրագրեր, ինչպես նաև ելից տեղեկություններ ունեցող էլեկտրոնային փաս-տաթղթեր, որոնք պատրաստվում և տարած-վում են համապատասխան կրիչներով.	Ընդունվել է, խմբագրվել է: «Տեխնիկական» բառը փոխարինվել է «տեխնիկայի» բառով:
	Նախագծի 10-րդ հոդված. Առաջարկվել է օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ	«1.Փաստաթղթեր պատրաստողները պարտա-վոր են փաստաթղթեր ստացողներին անհա-տույց հատկացնել պարտադիր օրինակը:	Ընդունվել է, նախագծի 7-րդ հոդվածը խմբագրվել է :

	խմբագրությամբ. Նախագծի 11-րդ հոդված. Օրենքի 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ	Պարտադիր անվճար օրինակի պատրաստման, հրապարակման և ստացողներին հատկացման (առաքման) ծախսերը ներառվում են փաստաթղթի ինքնարժեքի մեջ»: Հոդված 8. Փաստաթուղթ պատրաստողների պարտականությունները պարտադիր օրինակի հատկացման գործում 1. Փաստաթուղթ պատրաստողները իրենց պատրաստած փաստաթղթերի բոլոր տեսակների թողարկման առաջին խմբաքանակից հնգօրյա ժամկետում, իսկ օտար երկրներում պատրաստված փաստաթղթերը, սկսած Հայաստանի Հանրապետության տարածքում իրացնելու օրվանից, առաքվում են՝ ա) «Հայաստանի ազգային գրապալատ» ՊՈԱԿ-ին. մեկ պարտադիր օրինակ (բացի չհրապարակված փաստաթղթերից և տեսալսողական արտադրանքից՝) բ) «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ին մեկ պարտադիր օրինակ (բացի տեսալսողական արտադրանքից): 2. Ելնելով պարբերական և ոչ պարբերական հրատարակությունների նպատակային ուղղվածությունից՝ փաստաթուղթ պատրաստողները ըստ իրենց պատրաստած փաստաթղթերի համապատասխան տեսակների, պարտադիր անվճար օրինակներ են հատկացնում՝ ա) ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանին՝ մեկ պարտադիր օրինակ գիտական, տեղեկատվական, կրոնական, հասարակական-քաղաքական, բժշկագիտական, երաժշտագիտական,	Չի ընդունվել, հակասում է օրենքի հիմնական նպատակին:

		հանրագիտարանային, գիտահանրամատչելի, քարտեզագրական հրատարակություններից և պատկերահրատարակություններից. բ) «Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարան» ՊՈԱԿ-ին՝ մեկ պարտադիր օրինակ մանկական, գրական-գեղարվեստական, ուսումնական հրատարակություններից, ինչպես նաև հանրագիտարանային, գիտահանրամատչելի, քարտեզագրական հրատարակություններից և պատկերահրատարակություններից. գ) Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնին՝ մեկ պարտադիր օրինակ պաշտոնական հրատարակություններից և չհրապարակված փաստաթղթից (գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ, ավանդադրված գիտական աշխատանքներ, ալգորիթմներ և ծրագրեր դ) Հայաստանի կույրերի միավորման մշակույթի տան գրադարանին՝ երկու պարտադիր օրինակ կույրերի և թույլ տեսնողների համար՝ նախատեսված Բրայլի համակարգով պատրաստված հրատարակություններից ե) «Երաժշտագիտական գրադարան» ՊՈԱԿ-ին՝ մեկ պարտադիր օրինակ նոտագրական և երաժշտագիտական հրատարակություններից զ) «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ին՝ մեկ պարտադիր օրինակ բժշկագիտական հրատարակություններից է) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին՝	

		մեկ պարտադիր օրինակ տեսալսողական արտադրանքից: 3. Հայաստանի Հանրապետությունում տպագրվող լրատվության միջոցների ավանդադրվող պարտադիր անվճար օրինակ-ների հատկացումը իրականացվում է «Զանգվածային լրատվության միջոցների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:	
	Նախագծի 13-րդ հոդված. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը, իսկ 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ	**Հոդված 13.** Տարբեր նյութական կրիչների վրա կատարված փաստաթղթերի պարտադիր օրինակի հատկացումը 1. Պարտադիր օրինակը կարող է ներառել նաև համակցված փաստաթղթերը՝ տարբեր նյութական կրիչների վրա թողարկված փաս-տաթղթերի ամբողջությունը (տպագիր, տեսա-ձայնաշարային, էլեկտրոնային), նմանօրինակ բովանդակություն պարունակող, սակայն տարբեր նյութական կրիչների վրա տպված փաստաթղթեր): Համակցված փաստաթղթերի պարտադիր օրինակը մեկ ամբողջական փաթեթով պետք է հատկացվի համապատաս-խան պարտադիր օրինակ ստացողին՝ համաձայն սույն օրենքի 8-րդ հոդվածի: 2. Եթե էլեկտրոնային հրապարակումը համարվում է տպագիր հրապարակման հավելված, ներդիր, ապա այն առաքվում է տպագիր հրապարակման համար սահմանված քանակով և ընթացակարգով:	Ընդունվել է մասնակի, օրենքի 13-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչել:

	Նախագծի 13-րդ հոդված. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ	Հոդված 14. Պարտադիր օրինակ պատրաստողի իրավունքները Պարտադիր օրինակի ամբողջական և ժամանակին առաքումը փաստաթղթեր պատրաստողի համար երաշխավորում է հետևյալ իրավունքները. ա) անվճար մատենագիտական տեղեկատվության հրապարակում պետական (ազգային) մատենագիտական հրատարակություններում և գրացուցակներում, ազդորինակային, ռեֆերատային և գովազդային հրատարակություններում. բ) սույն օրենքին համապատասխան՝ իրենց կողմից ստեղծված փաստաթղթերի մշտական պահպանություն ՀՀ համապատասխան ազգային ֆոնդադարաներում և գրապահոցներում, գ) մատենագիտական տեղեկատվության ներառում հայրենական և միջազգային տվյալների ավտոմատացված շտեմարաններում, դ) պարտադիր անվճար օրինակ ստացողների կողմից հեղինակային իրավունքի՝ սահմանված կարգով պահպանումը:	Օրենքի 14-րդ հոդվածը ուժը կորցրած է ճանաչել:
	11-րդ հոդված. օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ	Հոդված 15. Պարտադիր օրինակի ստացողը և դրանց հաշվառումը, պահպանումը և սպասարկումն իրականացնող կազմակերպությունների պարտականությունները 1. Պարտադիր օրինակի ստացող, հաշվառող, պահպանող և մատենագիտական մշակման ենթարկող կազմակերպությունները պարտավոր են իրականացնել՝ ա) հրատարակությունների պետական գրանցումը (մատենագիտական և վիճակագրա-	Չի ընդունվել, որովհետև պարտադիր օրինակի պահպանությունը, հաշվառումը և օգտագործումը իրականացվելու է համաձայն Հայաստանի Հանրապետության

		կան) և հաշվառումը, պետական (ազգային) մատենագիտության կազմումը և էլեկտրոնային մատենագիտության ավանդադրման նախապատրաստումը (հեռանկարային, ընթացիկ, հետադարձ), հանրային հրատարակությունների ազգային անձեռնմխելի հավաքածուի համալրումը, դրանց մշտական պահպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.	կառավարության սահմանած կարգի, որտեղ մանրամասն կսահմանվեն բոլոր գործառույթները: Բացի այդ Օրենքի 15-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ:
	Օրենքի 16-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ 16.1 հոդված հետևյալ բովանդակությամբ.	Հոդված 16.1. Պարտադիր օրինակի առաքման նկատմամբ հսկողությունը Փաստաթուղթ ստացողներին պարտադիր օրինակի առաքման նկատմամբ հսկողությունը դրվում է ըստ փաստաթղթերի համապատասխան տեսակների ստացող, հաշվառող և պահպանող կազմակերպությունների վրա:	Չի ընդունվել, որովհետև ստացող կազմակերպությունը պարտադրելու մեխանիզմ չունի, եթե չի տրամադրվում օրինակը:
<< կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունից հանել <<***բնագավառը կարգավորող***>> արտահայտությունը:	Ընդունվել է:
	Նախագծի 3-րդ հոդված	Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետում <<***Տեղեկություն ունեցող***>> արտահայտությունը փոխարինել <<***տեղեկություն պարունակող***>> բառով :	Ընդունվել է: Խմբագրվել է:
		Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի սահմանումը ձևակերպել հետևյալ խմբագրությամբ՝ ***համակցված փաստաթուղթ՝ տարբեր նյութական կրիչներին միաժամանակ ամրացված մեկ ամբողջական փաստաթուղթ:***	Ընդունվել է: Խմբագրվել է: *Տե՛ս* 3-րդ հոդվածի 1-ին ենթակետը:

		Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետի սահմանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ ***Փաստաթուղթ պատրաստող՝ փաստաթղթի սեփականատեր կամ այն տիրապետող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իրականացրել է փաստաթղթի օրինական պատրաստումը՝ անկախ նյութական կրիչից:***	**Հոդվածը խմբագրվել է:**
		Օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ կետում անհրաժեշտ է <<***Ստացող>>*** բառից հետո ավելացնել <<***և պահպանող>>*** բառերը	Ընդունվել է, խմբագրվել է:
	Նախագծի 7-րդ հոդված վերնագրում՝	Օրենքի 6-րդ հոդվածի վերնագրում ավելացնել՝ <<***Պարտադիր օրինակ համարվող*** փաստաթղթի տեսակներն են>> բառերը	1-ին կետը հանվել է, քանի որ առկա է օրենքում:
	Նախագծի 7-րդ հոդված	Օրենքի 6-րդ հոդվածի ա/ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. ***Հրատարակություն՝ խմբագրված, ինքնուրույն ձևավորմամբ (գրավոր, նոտագրական, քարտեզագրական, պատկերահրատարակային), այդ թվում՝ պաշտոնական, ինչպես նաև կույրերի և թույլ տեսնողների համար նախատեսված Բրայլի կամ այլ համակարգով ստեղծված արտադրանք՝ անկախ նյութական կրիչից***	Ընդունվել է, մասնակի խմբագրվել է:
		Առաջարկվել է Հստակեցնել և սահմանել «Հրատարակություն և պաշտոնական հրատարակություն հասկացությունները», որոնք միմյանցից առանձնացված չեն, սակայն հոդված 8-ում օգտագործված են իբրև առանձին կատեգորիաներ	Հստակեցվել է: ***«Պաշտոնական հրատարակություն», չի օգտագործվում: Օրենքի 6-րդ հոդվածում***

			պահպանվել է «պաշտոնական փաստաթուղթը» Տե՛ս 7-րդ հոդվածը:
	Նախագծի 11-րդ հոդված	Օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետում ավելացնել. ***Հայաստանի ազգային գրադարանին*** • ***երկու պարտադիր օրինակ պաշտոնական հրատարակությունից*** • ***մեկ պարտադիր օրինակ տեսալսողական արտադրանքից*** • ***մեկ պարտադիր օրինակ էլեկտրոնային հրատարակությունից:***	Ընդունվել է, Օրենքի 8.1-ին հոդվածը խմբագրվել է:
	Նախագծի 4-րդ հոդված.	Խմբագրման կարիք ունի, քանի որ հոդվածի վերնագիրը և տեքստը իրար չեն համապատասխանում, մասնավորապես՝ ըստ հիշյալ հոդվածի՝ նոր խմբագրությամբ պետք է շարադրվեն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, մինչդեռ նախագծի 3-րդ հոդվածի տեքստում խոսք է գնում միայն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ, իսկ 2-րդ մասի կապակցությամբ որևէ դրույթ նախատեսված չէ:	Ընդունվել է: Խմբագրվել է: Տե՛ս 4-րդ հոդվածը:
	Նախագծի 4-րդ, 8-րդ, 9-րդ և 13-րդ հոդվածներ	«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի բաժինների, գլուխների, հոդվածների, մասերի, կետերի, ենթակետերի կամ պարբերությունների միջև համապատասխանաբար նոր բաժին, գլուխ, հոդված, մաս, կետ, ենթակետ կամ պարբերություն կարող է լրացվել	Ընդունվել է, խմբագրվել է:

		միայն լրացուցիչ համարով:	
	Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական, ծառայողական, վիճակագրական, առևտրային, ապահովագրական կամ բանկային գաղտնիք, ինչպես նաև ծառայողական տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի	Ընդունվել է, Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը խմբագրվել է:
	Նախագծի 5-րդ հոդված.	Առաջարկվում է Օրենքի 4.1-ին հոդվածը խմբագրել. **<<Հոդված 4.1. Սույն օրենքի նպատակը և խնդիրը** 1) Սույն օրենքի նպատակն է. ազգային մշակութային ժառանգության անքակ-տելի մաս կազմող փաստաթղթերի անձեռնմխելի հավաքածուի ստեղծումը, մշտական պահպանությունը և դրա մասին տեղեկատվության ապահովումը: 2) Սույն օրենքի խնդիրն է. պարտադիր օրինակի հատկացման, պահպանության, հաշվառման և օգտագործման իրավական կարգավորումը»:	Ընդունվել է, խմբագրվել է:
	Նախագծի 7-րդ հոդված.	Անհրաժեշտ է հանել «1) Փաստաթղթի տեսակներն են՝» բառերը, քանի որ նախագծի վերոհիշյալ հոդվածով նոր խմբագրությամբ են շարադրվում օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի ա. և զ. կետերը և ոչ թե 1-ին մասն ամբողջու-թյամբ: Միաժամանակ, նույն հոդվածում «ա.» և	Ընդունվել է, խմբագրվել է:

		«զ.» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ա)» և «զ)» բառերով:	
	Նախագծի 8-րդ հոդված.	Օրենքի 6.1.-ին հոդվածում անհրաժեշտ է հանել «գ)» ենթակետը, իսկ «ա)» ենթակետից «պաշտոնական, ինչպես նաև» բառերը: Օրենքի 6.2-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին և 2-րդ ենթակետերի «կազմակերպում է» բառերը փոխարինել «ապահովում է» բառերով, իսկ 3-րդ ենթակետի «հաստատում է»՝ «սահմանում է» բառերով: Հանել 4-րդ ենթակետը: «մշակում է» բառերը փոխարինել «սահմանում է» բառերով:	Ընդունվել է: Խմբագրվել է: Ընդունվել է: Խմբագրվել է:
	Նախագծի 12-րդ հոդված.	Խոսք է գնում նաև «առաքման ծախսերի» մասին, մինչդեռ 7-րդ հոդվածի վերնագիրը վերաբերում է միայն «պարտադիր օրինակի հատկացման ծախսերին»: Անհրաժեշտ է խմբագրել և նշված փոփոխությունները նախատեսել հոդվածի առանձին կետերի տեսքով:	Ընդունվել է: Խմբագրվել է:
	Նախագծի 12-րդ հոդված.	Օրենքի 8.1-ին հոդվածի 2-րդ մասի «հանձնում է» բառերը փոխարինել «հատկացնում և առաքում է» բառերով :	Ընդունվել է: Խմբագրվել է: Ընդունվել է: Խմբագրվել է:
	Նախագծի 12-րդ հոդված.	Նույն մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերից համապատասխանաբար հանել «դ», «գ» և «բ» ենթակետերը:	Ընդունվել է: Խմբագրվել

		Օրենքի 8.2-րդ հոդվածի վերնագիրը շարադրվում է նոր խմբագրությամբ հետևյալ կերպ. «Պարտադիր օրինակի հատկացումը, պահպանությունը, հաշվառումը և օգտագործումը»:	է:
	Նախագծի 16-րդ հոդված.	Չի բխում օրենքի 3-րդ գլխի վերնագրի պահանջներից, քանի որ հոդվածը նախատեսում է նաև պարտադիր օրինակ ստացողի «իրավունքների» վերաբերյալ դրույթներ, մինչդեռ օրենքի 3-րդ գլուխը վերաբերում է միայն «պարտադիր անվճար օրինակ ստացողների պարտականություններին»,	Ընդունվել է: Խմբագրվել է:
	Նախագծի 18-րդ հոդված.	«հրապարակմանը» բառն անհրաժեշտ է փոխարինել «հրապարակման օրվան» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:	Ընդունվել է: Խմբագրվել է: